

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանն Ու Կիպրոսը Հրապարակած են «Մելքոնեան Վարժարան» Խորագիրով Դրոշմաթուղթ

ԵՐԵՎԱՆ, «Արմէնփրէս».- Հայոց Յեղասպանութեան 100ամեակին ընդառաջ Կիպրոսի նամակատունը եւ «Հայփոստ»ը շրջանառութեան մէջ դրած են մէկական դրոշմաթուղթ՝ Մելքոնեան վարժարանի եւ անոր սաներուն պատկերներով: Անոնցմէ բէկուն

ւորումը բարեկամական յարաբերութիւնները: Միւս կողմից սահնարաւորութիւն է յարգանքի տուրք մատուցելու Սփիւռքի կարեւորագոյն վարժարաններից մէկին: Ծուրջ 80ամեայ գործունէութեան ընթացքում այն Հսկայական դերակատարութիւն է ունե-



վրայ պատկերուած է Մելքոնեան վարժարանի շէնքը եւ այն ծառերը, գորս տնկած են վարժարանին մէջ ապաստան դռած որբերը՝ ի յիշատակ իրենց նահատակ ծնողներուն: Միւս դրոշմաթուղթին վրայ կայ նկարը առաջին սաներուն՝ Մելքոնեան վարժարանի խորագրատկերով:

Դրոշմաթուղթերուն հրապարակութեան արարողութեան ընթացքին Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Ծաւարչ Քոչարեան կարեւոր նկատած է Հայաստանի եւ Կիպրոսի նամակատուներուն կողմէ եղած այս նախաձեռնութիւնը՝ ընդգծելով, որ Հայոց Յեղասպանութենէն ետք Մելքոնեան վարժարանը կարեւոր հանգրուան եղած է Հայ սաներու համար: «Նախ եւ առաջ համատեղ նամականիշի թողարկումը խորհրդանշում է Հայաստանի եւ Կիպրոսի միջեւ ձեւա-

ցել Հայապահպանութեան գործում: Խորհրդանշական է, որ համատեղ նամականիշի մարումը տեղի է ունենում Հէնց այս օրը, երբ Կիպրոսի խորհրդարանը ընդունեց օրէնք, որով քրէականացում է ցեղասպանութիւնների ժխտումը», նշած է Քոչարեան:

«Հայաստանի Փիլատելիստների միութեան» նախագահ Յովիկ Մուսայէլեան եւս ընդգծած է, որ դրոշմաթուղթերը մեծ կարեւորութիւն ունին ազգային արժէքներու տարածման տեսանկիւնէն: «Նշանակալի է, որ տարուայ մէջ մի քանի անգամ կարողանում ենք խօսել ազգային նամականիշերի մասին: Նամականիշերը՝ մեր դրօշի եւ դրամի հետ միասին, երկրի խորհրդանիշներից են», ըսած է ան:

«Մելքոնեան վարժարան»ին նուիրուած դրոշմաթուղթերը հրապարակուած են 60 հազար տպաքանակով: